3. 7-րդ տողի վդաց պետք է կարդալ վարդապետաց:

Տարընթերցում.— Ջալ բշոց, վեցկի *բառերը բաց է թողել։*

114. Գտանւմ նախագավթի հս պատին

(Լուս. № 71)

Հ Չ Մ 1251

Հրատարակված է՝ Ջալ 27, Դրիմ 60, Վիմ 95

1 *Ի թուիս Չ։ Կամաւն Ա̅յ, ես՝*
2 *Գրիգոր իշխան միաբանեց-*
3 *ա ս̅ր ուխտիս Սանահնիս, Աւէտի-*
4 *ս վ̅դ եւ միաբանքս եատւն մեզ*
5 *Բ պատարագ ի տաւնի Տրդատա թ̅գ̅ի։*
6 *Որ խափանէ դատի ի տ̅է։*

Նկ. 71. Արձ. № 114։

Տարընթերցում.— Ջալ Ի տաւնի Տրդատա թգի *(թագաւորի) բաց է թողել, իսկ* Դրիմ *կար-դացել է՝* Ի տաւնի Եւստաթէի։

115. Նախորդի կողքին

(Լուս. № 72)

Հ ՉՁ Մ 1257

Հրատարակված է՝ Ջալ 37, Դրիմ 60, Վիմ 100

1 *Ի թվիս ՉՁ։*
2 *Կամաւն Ա̅յ ես՝ Ստեփանոս Խլաթեցի միաբանեց-*
3 *այ ս̅ր ուխտիս Սանահնիս եւ էտու արդի-*
4 *ւնս ինչ։ Հայրս Կիրակոս եւ միաբա-*
5 *նքս էտուն մեզ ̅ր պա(տա)րագ ի տաւնի սրբ-*
6 *ոյն Ստեփաննոսի։ Որ խափանէ դատի յԱ̅յ [եւ]։*

Տանոթություն.— Ջալ Խլաթեցի *կարդացել է* Խլրցի։

116. Գտանւմ նախագավթի մեջ, բարձր, քաղի վրա

Հ ՉԽ Մ 1291

Հրատարակվում է առաջին անգամ

1 *ՉԽ։*
2 *Կամաւն Ա̅յ ես՝ Ջ[ն]ելանց] Մելիքս եւ ամուսին իմ Մամա, եւ հայր մեր Մխի-*

. . . .